ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆԻ՝ ՎՐԱՍՏԱՆ (ԹԲԻԼԻՍԻ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Սրբուհի Գալյան, Արդարադատության նախարար:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Վրաստան (Թբիլիսի), 2025 թվականի նոյեմբերի 16-ից 18-ը:

Հրավիրող կողմը՝ Վրաստանի արդարադատության նախարարություն:

Գործուղման նպատակը՝ Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև իրավական 6-րդ ֆորումին (այսուհետ՝ նաև Ֆորում) մասնակցության և երկկողմ հանդիպումներ անցկացնելու նպատակով:

Քննարկված թեմաները՝ Ֆորումի ընթացքում քննարկվել են երկու երկրներում դատաիրավական բարեփոխումներին, էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրմանը, մարդու իրավունքների պաշտպանության բարելավմանը, կոռուպցիայի դեմ պայքարին, անձնական տվյալների պաշտպանությանը, քրեակատարողական և պրոբացիայի ծառայություններում իրականացվող բարեփոխումներին առնչվող ու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հայաստանի և Վրաստանի միջև իրավական 6-րդ ֆորումին մասնակցելու և Վրաստանի բարձրաստիճան պաշտոնյաների հետ երկկողմ հանդիպումներ անցկացնելու նպատակով Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը 2025 թվականի նոյեմբերի 16-ից 18-ը գտնվել է Թբիլիսիում:

Անհրաժեշտ է նշել, որ ֆորումները կազմակերպվում են 2015 թվականից ի վեր և անցկացվում հաջորդաբար Երևանում և Թբիլիսիում: Այսպես՝ Հայաստանի և Վրաստանի միջև իրավական առաջին ֆորումը տեղի է ունեցել 2015 թվականի հունիսի 25-ից 26-ը Երևանում, երկրորդը՝ 2017 թվականի հոկտեմբերի 20-ին Թբիլիսիում, երրորդը՝ 2019 թվականի դեկտեմբերի 9-ից 11-ը Երևանում, չորրորդը՝ 2022 թվականի մայիսի 1-ից 3-ը Թբիլիսիում և հինգերորդը՝ 2024 թվականի ապրիլի 11-ից 12-ը Երևանում:

Ֆորումի ընթացքում քննարկվել են երկու երկրներում դատաիրավական բարեփոխումներին, էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրմանը, մարդու իրավունքների պաշտպանության բարելավմանը, կոռուպցիայի դեմ պայքարին, անձնական տվյալների պաշտպանությանը, քրեակատարողական և պրոբացիայի ծառայություններում իրականացվող բարեփոխումներին առնչվող ու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Ֆորումին մասնակցել և բացման խոսքով հանդես են եկել ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը և Վրաստանի արդարադատության նախարար Պաատա Սալիան:

Իր խոսքում ՀՀ արդարադատության նախարարը նշել է, որ Ֆորումը տարիների ընթացքում դարձել է Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև

արդարադատության համակարգերի համագործակցության կարևոր և արդյունավետ հարթակ, որը հնարավորություն է տալիս ոչ միայն ամրապնդել իրավական համագործակցությունը, այլև քննարկել արդարադատության ոլորտում ընթացող բարեփոխումներին, մարդու իրավունքների պաշտպանությանը, թվայնացմանը, արդյունավետ կառավարմանը, կոռուպցիայի դեմ պայքարին, քրեակատարողական և պրոբացիայի ծառայություններին առնչվող մի շարք հարցեր՝ խթանելով բարձր մակարդակի համագործակցությունը երկու երկրների միջև:

Այցի ընթացքում Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը հանդիպել է Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեի, Գերագույն դատարանի նախագահ Նինո Կադագիձեի և Արդարադատության նախարար Պաատա Սալիայի հետ:

Վրաստանի վարչապետի հետ հանդիպման ընթացքում կողմերը կարևորել են Հարավային Կովկասում երկարատև ու կայուն խաղաղության ապահովման անհրաժեշտությունը, տարածաշրջանի կայուն և երկարաժամկետ զարգացման հիմնարար նշանակությունը, ինչպես նաև արդարադատության ոլորտում Վրաստանի և Հայաստանի արդյունավետ գործընկերությունը և այս ուղղությամբ փորձի փոխանակման հնարավորությունը երկու բարեկամ երկրների միջև:

Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի և Վրաստանի արդարադատության նախարար Պաատա Սալիային միջև կայացած հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի և Վրաստանի միջև իրավական 6-րդ ֆորումին, վերջինիս շարունակականության ապահովմանն առնչվող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր: Երկու գործընկերները ընդգծել են Ֆորումի կարևորությունն ու հետագա համագործակցության խորացումն ու ամրապնդումը:

Սրբուհի Գալյանն իր գործընկերոջը ներկայացրել է նաև Հայաստանում իրականացվող սահմանադրական, դատաիրավական, թվայնացման և նախարարության իրավասության շրջանակում իրականացված և ընթացքի մեջ գտնվող բարեփոխումները:

Բացի այդ, քննարկվել է նաև արդարադատության ոլորտում փորձի փոխանակման հնարավորությունները և համատեղ աշխատանքի շարունակականությունն ապահովելու ուղղությունները:

Ֆորումի շրջանակում Արդարադատության նախարարը և Նախարարության պատվիրակությունն այցելել են Վրաստանի թիվ 5 կանանց քրեակատարողական հիմնարկ՝ տեղում ազատությունից զրկված կանանց պահման պայմանները, նրանց համար իրականացվող վերասոցիալականացման ու կրթական ծրագրերն ուսումնասիրելու և առկա լավագույն փորձը ՀՀ-ում տեղայնացնելու հնարավորությունների ծանոթանալու համար:

Անհրաժեշտ է նաև նշել, որ ճանաչողական շրջայց է կատարվել նաև Թբիլիսիի հանրային ծառայության սրահում՝ ծանոթանալով հանրային ռեեստրի ազգային գործակալության, հանրային ծառայության զարգացման գործակալության, պրոբացիայի ծառայության գործունեությանը և Վրաստանի պաշտոնական տեղեկագրերի ստացման մեխանիզմներին:

Ֆորումի ավարտին Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը երախտագիտություն է հայտնել Վրաստանի արդարադատության նախարարության

գործընկերներին՝ ջերմ ընդունելության, ինչպես նաև Հայաստանի և Վրաստանի միջև իրավական վեցերորդ ֆորումը բարձր մակարդակով կազմակերպելու, երկու օր շարունակ արդյունավետ քննարկումների, արժեքավոր մտքերի և համատեղ աշխատանքի համար:

Սրբուհի Գալյանը նշել է, որ Ֆորումը ևս մեկ անգամ ապացուցեց, որ այն ոչ միայն հնարավորություն է տալիս ներկայացնել իրականացված բարեփոխումները, այլև ստեղծում է անկեղծ երկխոսության և փորձի փոխանակման միջավայր, որտեղ ծնվում են նոր գաղափարներ և նախաձեռնություններ:

Ամփոփելով իր խոսքը՝ ՀՀ արդարադատության նախարարը շեշտել է, որ Ֆորումի շրջանակում ծավալված քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել արդարադատության ոլորտի լայն շրջանակն ընդգրկող թեմաներին, որոնք ոչ միայն խորացրել են փոխըմբռնումը երկու երկրների միջև, այլև բացել են նոր հնարավորություններ՝ համատեղ ծրագրերի և նախաձեռնությունների իրականացման համար:

Վրաստանի արդարադատության նախարար Պաատա Սալիան իր փակման խոսքում շնորհակալություն է հայտնել հայկական պատվիրակությանը համատեղ աշխատանքի համար և նշել, որ Հայաստանի և Վրաստանի միջև իրավական ֆորումները դարձել են երկու բարեկամ երկրների գործընկերության ամրապնդման կարևոր հարթակ:

Հայաստանի և Վրաստանի միջև իրավական 6-րդ ֆորումի արդյունքներով երկու պետությունների Արդարադատության նախարարները համաձայնության են եկել համագործակցություն խորացնելու և ամրապնդելու հետևյալ ուղղություններով.

- ԵՄ օրենսդրությանը իրավական ակտերի մոտարկման վերաբերյալ փորձի փոխանակման համար աշխատանքային խմբի ստեղծում:
- Մարդու իրավունքների պաշտպանության, ներառյալ՝ ներպետական և միջազգային պարտավորությունների և գնահատման գործիքների արդյունավետ կիրառման ոլորտում համագործակցության խորացում և ամրապնդում:
- Արդարադատության ոլորտում արհեստական բանականության կիրառման ուղղությամբ համագործակցության զարգացում:
- Արդարադատության ոլորտի ուսումնական կենտրոնների միջև համագործակցության խորացում:
- Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների ուղղությամբ համագործակցության խթանում՝ կարևորելով հաշտարարության զարգացումը, լավագույն փորձի փոխանակումը և ինստիտուցիոնալ կարողությունների բարելավումը:
- Արդարադատության ոլորտում մատուցվող ծառայությունների շարունակական բարելավման վերաբերյալ քննարկումների անցկացում:
- Քրեակատարողական համակարգի արդյունավետության բարձրացման վերաբերյալ շարունակական երկխոսության ապահովում:

Հարկ է նաև նշել, որ Հայաստանի և Վրաստանի միջև իրավական հաջորդ՝ 7-րդ ֆորումը տեղի է ունենալու 2026 թվականին Երևանում:

Արդարադատության նախարար

Սրբուհի Գալյան
21.11.2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը **ՀՀ արդարադատության նախարարություն**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 1014-Ա որոշում**
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը **ՀՀ արդարադատության նախարարտ Սրբուհի Գայյան**
(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)
4. Գործուղման վայրը **Վրաստան (Թբիլիսի)**
5. Գործուղման ժամկետները **2025 թվականի նոյեմբերի 16-18-ը**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը- **Օրապահիկ, գիշերավարձ**
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը **ճանապարհածախս**,
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)
☒ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		**Սրբուհի Գայյան**	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		

	Ընդամենը (դրամ)		
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		
Այլ ծախսեր			
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (*Սպասարկում ՊՊ սրահում*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		-	-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ